Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարի
2018 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 131 որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:

Խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամը պետք է լինի 16-ից 30 տարեկան երիտասարդ և պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝

1. Երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետելը,
2. Երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ,
3. Երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

Հավասար պայմանների դեպքում որպես առավելություն են դիտվում Երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացված փորձագիտական աշխատանքները կամ հրապարակումները, ոչ ֆորմալ կրթության ոլորտի գիտելիքները և գործնական աշխատանքի փորձը:

Մրցույթը կկայանա 2018 թվականի նոյեմբերի 16-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել Արենիի համայնքապետարանի աշխատակազմ հետևյալ հասցեով՝ գ. Արենի, 15 փողոց, շենք 3, հեռ. +374281 6 00 01:

Դիմումների տրման վերջնաժամկետը 2018 թվականի նոյեմբերի 14-ն է՝:

Դիմումատուն Արենիի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնի՝

ա)դիմում համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի անունով (դիմումի ձևը ազատ է),

բ) խորհրդի անդամին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմի(ների), վկայականի(ների) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ)մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափի,

դ)անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայանալով անձնագրով, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9.00-ից մինչև 18.00-ը:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9.00-ից 18.00-ը: